ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ



ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(1926–2001)

Արձակագիր, պատմավիպասան Հայկ Խաչատրյանը ծնվել է ԼՂՀ Ասկերանի շրջանի Դահրավ գյուղում: Մանկությունն ու պատանեկությունն անցկացրել է գյուղում և Շուշի քաղաքում: Սովորել է Դահրավի յոթնամյա դպրոցում, ապա՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանում: 1945թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որն ավարտելուց հետո Կապան քաղաքի դպրոցներից մեկում աշխատել է որպես ուսմասվար, հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ, տեսուչ: Հայկական հանրագիտարանի 12 և 1 լրացուցիչ հատորների խմբագրության և հրատարակության գործում ունեցած դերի համար արժանացել է Հայկական պետական մրցանակի: 1979 թ. զրկվել է մեկ ոտքից, սակայն շարունակել է իր գրական և աշխատանքային գործունեությունը:

Հ. Խաչատրյանը 15-ից ավելի պատմավեպերի և տասնյակից ավելի հանրագիտարանային բնույթի հսկայածավալ գրականության հեղինակ է: Նա իր պատմավեպերում և մնացած բոլոր աշխատություններում կարևորել է հայոց լեզուն, գովերգել է հայ մարդու աշխատասիրությունը, հորդորել է սերունդներին անգիր իմանալ հայոց պատմությունը, պաշտպանել ու սիրել հայոց հողը: «Տիեզերքում չկա մի շրջյուն, որ չկարողանաս արտահայտել հայերենով: Հայերենը հազարալեռ Հայքի հավերժակյաց արքան է, որ գահեր ունի բոլոր հայերի սրտերում»,- ասել է Հ. Խաչատրյանը:

Հ. Խաչատրյանի սիրելի գույնը կապույտն էր, սիրելի միրգը՝ ծիրանը. ըստ նրա՝ կապույտը հայոց աստվածների բնօրրան երկնքի մաքրության խորհրդանիշն է, իսկ ծիրանի հյութը՝ նրանց սիրելի ըմպելիքը: Հ. Խաչատրյանի կարծիքով աշխարհի ամենամեծ գրողներն են Շեքսպիրը և Հովհաննես Թումանյանը:

ԵՐԿՈՒ ԶԵՆՔ

(հատված «Տիգրան Մեծ» պատմավեպից)

– Արտավա՛զդ:

– Լսում եմ, արքայի՛ց արքա:

– Ես քո հայրն եմ, Արտավա՛զդ:

– Դու սովորեցրել ես ինձ չշեղվել պալատական կարգուկանոնից:

– Այո՛, բայց մենք հիմա խոսում ենք որպես հայր ու որդի:

– Ես լսում եմ, հա՛յր իմ:

– Հա՛յր իմ, դա ավելի լավ է հնչում, քան արքայից արքան:

– Երկուսն էլ հրաշալի են հնչում:

– Ի՞նչ էիր անում այսօր:

– Շրջում էի մայրաքաղաքում:

– Եվ ի՞նչ տեսար:

– Կառուցում, հա՛յր իմ, ամեն տեղ կառուցում են, ավելի շքեղ են կառուցում, քան առաջ: Դա նշանակում է, որ հայն այլևս վախ չի զգում ո՛չ համայն Հայքի, ո՛չ էլ Տիգրանակերտի համար:

– Դու այդպե՞ս ես կարծում:

– Այո՛, հա՛յր իմ:

– Սխալվում ես, որդի՛ս Արտավազդ. դու երկու զենքով պիտի պահես Հայքը:

– Երկո՞ւ:

– Այո՛:

– Որո՞նք են այդ զենքերը:

– Հայոց լեզուն և հայկյան սուրը: Հիշի՛ր, տղա՛ս, սուրը դու կարող ես պատյանի մեջ դնել, բայց վերստին հանել, կոտրվելու դեպքում կռել նորը: Սակայն եթե սխալվես և հայոց լեզուն դնես պատյանի մեջ, այլևս չես կարող հանել և ոչ էլ ստեղծել նորը: Ամեն ինչ կարելի է կառուցել, վերագտնել բոլոր կորուստները, բայց եթե կորցնես մայրենին, կկորցնես և՛ քեզ, և՛ վարքը հայոց մեծաց, և՛ Հայքը համայն, և՛ ապագան Ասքանազյան մեր ազգի:

– Ես չեմ շեղվի քո իմաստուն վճռից, հա՛յր իմ:

Առաջադրանքներ

1. Կարդա՛ «Ավետյաց երկիր» թևավոր խոսքի մասին տեղեկություն և մեկնաբանի՛ր:

Ըստ աստվածաշնչյան առասպելի՝ Աստված հրեաների առաջնորդ Մովսես մարգարեի միջոցով խոստանում է նրա ժողովրդին Եգիպտոսից հասցնել Պաղեստին, որ ըստ դրա՝ կոչվում էր Ավետյաց (այսինքն՝ խոստացված) երկիր, ուր Բարձրյալի խոստման համաձայն՝ հոսում էին մեղրի ու կաթի գետեր...

Այստեղից առաջացավ և աշխարհի շատ լեզուների սեփականությունը դարձավ «Ավետյաց երկիր» թևավոր խոսքը, որ փոխաբերաբար նշանակում է «երազելի, անձկալի հող կամ երկիր», «մի վայր, որին մեկը խիստ տենչում է և որտեղ հույս ունի առավել լավ կյանք վայելելու»:

Ա. Իսահակյանը «Հայ գրականության տասնօրյակը Մոսկվայում» հոդվածում հիշյալ թևավոր խոսքը հենց այդ իմաստով էլ գործածել է. «Պատմական բախտի բերումով ամբողջ աշխարհում ցիրուցան հայ աշխատավորների հայացքներն ուղղված են դեպի Հայաստան, դեպի ավետյաց երկիրը, հայերի սրբազան հայրենիքը» ***(ըստ Պ. Բեդիրյանի)***:

2. Հասկանալով կարդա՛ Մ. Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքից հատվածը և մեկնաբանի՛ր՝ ինչու են սուրբ Մաշտոցի գիրը համարում զենք:

«Տեր Հարությունը մեծ ու ձերմակ պաստառը կախել էր Տիրամոր նկարի կողքին և վառ կարմիրով հյուսում էր տառերը:

– Հայոց տառերը կարմիր են,– բացատրում էր տեր Հարությունը,– քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվներին են մասնակից եղել»:

3. «Երկու զենք» երկխոսությունը վերափոխի՛ր պատմողական խոսքի: